Ազրբէջանը երբեք այդ հողամասի վրա չի տարածուել և այդ պատճառով թէ՛ իրաւական և թէ՛ փաստական ոչ մի հիմք չկայ Զանգեզուրը Ազրբէջանի հողամաս համարելու: Զանգեզուրը, համաձայն իր գիւղացիութեան կամքի, կառավարուել է և այժմ էլ կառավարւում է իր խորհրդով և իրեն համարում է անբաժան մասը Հայաստանի Հանրապետութեան:

Երկրորդ կէտի մասին. Հայաստանի դօրքերը, ինչպէս կառավարութիւնը բազմիցս յայտարարել է, երբեք չեն անցել հարևան հանրապետութիւնների, ինչպէս նաև Ազրբէջանի սահմանները:

Երրորդ կէտի առթիւ. Հայաստանի սահմաններում ազգաբնակութեան կոտորած չկայ, իսկ անցեալի ընդհարումներն առաջացել են մուսաւաթական կառավարութեան և տաճիկ գործակալների ձեռքով հայկական հողամասերի վրա և Հայաստանի հանրապետութեան դէմ կազմակերպուած մահմետական ապստամբութիւններով, և կառավարութիւնը պարտաւորուած է եղել ձեռք առնել նախազգուշական միջոցներ եկւոր պրովոկատորների դէմ: Ընդհակառակը, Ղարաբաղի դէպքերի առթիւ Ազրբէջանի ամբողջ տարածութեան վրա հայերի զանգուածային կոտորածներ են տեղի ունեցել և այրուել են տասնեակ հայկական գիւղեր:

Լինելով կանգնած բոլոր վիճելի հարցերը խաղաղ միջոցներով լուծելու տեսակէտի վրա և հակառակելով պատերազմական գործողութիւններին, Հայաստանի կառավարութիւնը համաձայն է Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների վերոյիշեալ կարծիքին և նոր ընդհարումների ծագման հնարաւորութիւնները վերացնելու նպատակով առաջարկում է ձեր կառավարութեան՝ առաջին — դադարեցնե՛լ բոլոր ռազմական գործողութիւնները, երկրորդ — սահմանների վերջնական ճշման և հարևան հանրապետութիւնների միջև բնականոն յարաբերութիւններ ստեղծելու համար Հայաստանի կառավարութեան հետ սկսել բանակցութիւններ: № 2724. Հայաստանի արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանեան»:

Այս պատասխաններից դուք տեսնում էք, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը տոգորուած է դերազանց խաղաղասիրութեամբ, և նրա բուռն ցանկութիւնն է բոլոր վէճերը լուծել փոխադարձ համաձայնութեամբ: Միաժամանակ, կանգնած լինելով ժողովուրդների ինքնորոշման բարձր սկզբունքի վրա՝ կառավարութիւնը պարտ է համարում յայտնել, որ նա հայ բովանդակ ժողովրդի վճռական կամքի համաձայն, պատրաստ է ամէն գնով պաշտպանելու Հայաստանի սահմաններն ու անկախութիւնը՝ ում կողմից էլ որ վտանգ սպառնայ նրան (աղմկալից ծափեր):

Խորհրդարանը միաձայնութեամբ որոշում է քննել արտաքին գործերի նախարարի զեկուցումը: Ձայն է խնդրում դաշնակցական պատգամաւոր Ս. Թորոսեանը:

Հայաստանի ժողովրդի ներկայացուցիչներ, սոյն թուի ապրիլ 28-ին Կովկասի կեանքում բացւեց մի հետաքրքիր էջ, ասում է նա, սկսւեց պատմութեան մի նոր շրջան: Ազրբէջանը, որ ազնուական-բէկական մի երկիր է, որ տաճկական օրիենտացիայի ցայտուն արտայայտիչն է, դարձել է կոմունիստ:

Ռուսական կոմունիզմը պտուղ է զարգացած արդիւնաբերութեան, նա բանւորութեան և գիւղացիութեան տիրապետութիւնն է Ռուսաստանում, Ազրբէջանը չունի ամենևին այդ նախապայմանները, նա դեռ չի ազատագրուել բէկական-խանական տիրապետութիւնից, բայց յայտարարել է իրեն կոմունիստ: Սակայն, պատմութեան մէջ խոշոր թռիչքներ չեն կարող տեղի